

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԸՆԴՈՒՆԵՅ ԼԻՔԱՆԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ՄԻՇԷԼ ԱՌԻՆԸ

Սուրբիոյ Նախագահ Պաշտար ալ-Ասատ ընդունեց Լիբանանի Նախկին Նախագահ զօր. Միշել Առինը:

Հանդիպումին ընթացքին Նախագահ Ասատ շեշտեց, որ Լիբանանի գործընկերը իր քաղաքական եւ տնտեսական կայունութեան մէջ է, ինչ որ լիբանանցիները կը յաջողին իրականացնել երկխօսութեամբ եւ համախոհութեամբ: Նախագահը հաստատեց, որ Լիբանանի կայունութիւնը կը նպաստէ Սուրբիոյ եւ ողջ տարածաշրջանի կայունութեան:



Նախագահ Ասատ իր համոզումը յայտնեց առ այն, որ լիբանանցիները պիտի շրջանցեն բոլոր դժուարութիւնները եւ իրենք պիտի ուրուագծեն իրենց երկրի ապագան, աւելցնելով, որ Սուրիան եւ Լիբանանը միեւնոյն դժուարութիւնները կը դիմագրաւեն: Ան անդրադարձաւ վերջերս ժատտէի արաբական գագաթնաժողովի շրջագիծէն ներս տեղի ունեցած միջարաբական մերձեցման, յայտնելով, որ այդ մէկը իր դրական ազդեցութիւնը պիտի ունենայ Սուրբիոյ եւ Լիբանանի վրայ:

Իր կարգին զօր. Առին շեշտեց, որ լիբանանցիները իրենց ազգային միասնակամութեան կառչած են, հակառակ բոլոր խոչընդոտներուն: Ան դիտել տուաւ, որ Սուրիան շրջանցեց դժուար եւ վտանգաւոր փուլ մը՝ շնորհիւ իր ժողովուրդին գիտակցութեան եւ իր երկրին, ղեկավարութեան եւ բանակին հանդէպ ունեցած հաւատքին ու վստահութեան, շեշտելով, որ Սուրբիոյ բարգաւաճումը դրական ազդեցութիւն պիտի ունենայ Լիբանանի եւ լիբանանցիներուն վրայ:

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԷՊԼԱ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՂ ԻՏԱԼԱՅԻ ՀՆԱԳԷՏԸ ԴԱՐԳԵԽՏՐԵՅ

Սուրբիոյ Նախագահ Պաշտար ալ-Ասատ եւ Սուրբիոյ Առաջին Տիկին Ասմա ալ-Ասատ ընդունեցին համաշխարհային հնագիտական իտալական, չեխական, հունգարական պատուիրակութիւններ, որոնք եւրոպական երկիրներէ ժամանող մասնագետներու կողքին մասնակցած էին Դամասկոսի մէջ տեղի ունեցած հնագիտական հարստութիւններու խորհրդաժողովին:



Եւրոպացի մասնագետներուն մէջ յայտնի դէմքերէն էր իտալացի հնագետ, Էպլայի թագաւորութիւնը յայտնաբերող Փաուլօ Մաթիէն, որուն Նախագահ Ասատ գերազանց դասու սուրիական վաստակի շքանշան շնորհեց:

ՍՐԲԱՅԱՆ ՀԱՅՐԸ ԻՐ ՄԱՏՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԱԻ ԽՈՒՄԷՅՆԻ ՄԱՀՈՒԱՆ 34-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ՅՈՒՆ ԵՐԵԿՈՅԻՆ

Երկուշաբթի, 5 Յունիս 2023-ի երեկոյեան, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ազգ. Վարչութեան անդամ Արմէն Գասպարեանի եւ Սուրբիոյ Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Ծերուն Գահուճեանի ընկերակցութեամբ Հայկաի մէջ Իրանի հիւպատոսարանէն ներս իր մասնակցութիւնը բերաւ Իրանի իսլամական յեղափոխութեան ղեկավար Խումէյնի մահուան 34-ամեակի յուշ երեկոյին, որուն ներկայ գտնուեցան նաեւ պետական բարձրաստիճան պատասխանատուներ եւ իսլամ կրօնաւորներ:



Երբայրական սիրոյ ջերմ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին անդրադարձ կատարուեցաւ սուրիացի եւ պարսիկ ժողովուրդներուն միջեւ գոյություն ունեցող եղբայրական սերտ յարաբերութեան, ինչպէս նաեւ հայ եւ պարսիկ ժողովուրդներուն պատմական, դարարմատ յարաբերութեան: Այցելուները անդրադարձան իսլամ-քրիստոնէայ կրօններու եղբայրական կենսակցութեան, յատկապէս սուրիական հայրենիքէն ներս: Այցելուները Սրբազան Հօր յուշանուէր մը շնորհեցին այս առիթով:

ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱԾԱՌՆ ՈՒ ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ԲԱՆԱՏԱՅԻ ՎԱՐՉԱԴԵՏ ԹՐՈՒՏՈՅԻ ՀԵՏ ԲԵՆԱՐԿԵՅԻՆ ԱՐՅԱՆԻ ՇՐՋԱԾԱՎԱՄԱՆ ՀԱՐՅԸ

6 Յունիսին Օթթաուայի մէջ տեղի ունեցած հանդիպման ընթացքին, Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Արամ Ա. Վեհափառը Բանատայի վարչապետ Ճասթին Թրոտտոյի հետ արծարծեց Արցախի հարցը: Միաժամանակ ընկերակցեցան Հայաստան-Բանատա համագործակցութեան ծիրն ու Միջին Արեւելքի քաղաքական տագնապը:



Հանդիպման ներկայ էին Բանատայի արտաքին գործոց Նախարար Մելանի ժոլին, Բանատայի խորհրդարանի Հայաստան-Բանատա բարեկամական խմբակցութեան Նախագահ Պրայն Մէյը, ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեանը, Առաջնորդ Բարբէլ Արք. Չարեանը, ՀՀԴ Բանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Միքէլ Գարագաշեանը, Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ Սարո Տեր Պետրոսեանը, Օթթաուայի Հայ Դատի գրասենեակի տնօրէն Սեւակ Պէլեանը, Գեմայրիճի հոգեւոր հովիւ Հայր Գեղարդ Զիւսպէեանը ու Հայրապետի գաւազանակիր Հայր Պարոյր Շերնեգեանը:

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՏՈՒՐԱՎՈՒԹԻՒՆ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ ԱԶԳ. ՍՈՍՏՆՈՐԿԱՐԱՆ

Ուրբաթ, 2 Յունիս 2023-ի միջօրէին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս ընդունեց պաշտօնական այցելութիւնը Իրանի Իսլամական Հանրապետութեան պատուիրակութեան, որուն մաս կը կազմէին Իրանի իսլամական հանրապետութեան Նախագահի կրօնական հարցերու գրասենեակի գործավար Այա Ալլա Ապու ալ-Զասիմին, Հայկաի մէջ Իրանի Իսլամական Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Նաուապ Նուրիին եւ հիւպատոսութեան մշակութային պատասխանատու Հաճ Սապեր Ռամին:



Հանդիպումին ներկայ գտնուեցան Սուրբիոյ Խորհրդարանի անդամ եւ Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետ Ժիրայր Ռէիսեան, Կրօնական ժողովի ատենապետ Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Ազգ. Վարչութեան ատենապետ մեթր Սունայուլ Սունայուլեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբաններէն Հոգ. Տ. Առաքել Արք. Գատեհճեան:

Եղբայրական սիրոյ ջերմ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին անդրադարձ կատարուեցաւ սուրիացի եւ պարսիկ ժողովուրդներուն միջեւ գոյություն ունեցող եղբայրական սերտ յարաբերութեան, ինչպէս նաեւ հայ եւ պարսիկ ժողովուրդներուն պատմական, դարարմատ յարաբերութեան: Այցելուները անդրադարձան իսլամ-քրիստոնէայ կրօններու եղբայրական կենսակցութեան, յատկապէս սուրիական հայրենիքէն ներս: Այցելուները Սրբազան Հօր յուշանուէր մը շնորհեցին այս առիթով:

Խմբագրական

ԹՈՒՐՔԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸՆ ՎԵՐՋ ԱԿՆԿԱԼԵ՛Լ ՍՈՒՐԻԱ-ԹՈՒՐՔԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՐԵԼԱՌՈՄ

Հակառակ Սուրիա-Թուրքիա մերձեցման փորձերուն, Թուրքիոյ Նախագահական ընտրութիւններէն վերջ Սուրիոյ տարածքներուն նկատմամբ թրջական վտանգը չէղեալ համարելը իրատեսական չի թուիր:

Չմոռնանք, որ Թուրքիոյ վերընտրուած Նախագահը Սուրիոյ հետ յարաբերութիւններու դրական փուլ մը սկսած ըլլալով հանդերձ Նախքան 2011-ը, Միջին Արեւելքի մէջ իր ազդեցութիւնը տարածելու եւ տիրող հիմնական ուժը ըլլալու հեռանկարով թշնամացաւ Սուրիոյ հետ ու նկատառելի դեր ունեցաւ Սուրիոյ դէպքերու իրահրման ու տարածքներ գրաւեց Սուրիայէն:

Հակառակ իր խաղաքարտերու առաւելագոյն օգտագործման, սակայն, Երտողան չյաջողեցաւ տիրական դէմք դառնալ Միջին Արեւելքի մէջ: Թուրքիոյ տնտեսական ճգնաժամը, արաբական աշխարհի սթափեցումը, ինչպէս նաեւ Ռուսիոյ Ներկայութիւնը տարածաշրջանին մէջ ոչ միայն սանձեցին Երտողանի ախորժակները, այլեւ պարտադրեցին որ թե՛ արաբական երկիրներու եւ թե՛ Սուրիոյ հետ իր երկրի քաղաքականութեան վերանայի:

Ներկայիս, Սուրիա - արաբական աշխարհի, Իրան-Սէուտական Արաբիա մերձեցումներն ու Ռուսիոյ եւ Չինաստանի դերը մասամբ տկարացուցած են Թուրքիոյ ազդեցութիւնը ինչպէս Միջին Արեւելքի ու ծոցի երկիրներուն վրայ, այնպէս ալ սուրիական հարցին մէջ:

Միւս կողմէ Թուրքիոյ տնտեսական ծանր վիճակը, միեւնոյն ատեն սուրիացի տեղահանուածներու բեռը Թուրքիոյ իշխող խաւը ուղղած է վերանայելու իր քաղաքականութեան միջինարեւելեան եւ արաբական երկիրներուն հետ եւ թեքելու արաբական շուկայի ներգրաւման կարելիութիւններուն ուղղութեամբ:

Այդուամենայնիւ, Սուրիոյ մէջ իր ներկայութիւնը առաւելագոյնս օգտագործելու Թուրքիոյ Նախագահին նկրտումները յստակ են, մերթ քրտական գործօսի պատրուակով, մերթ Սուրիոյ իշխող վերնախաւին մէջ իր կողմնակիցները տեսնելու ճիգերով:

Սուրիական դիւանագիտութիւնը ողջախոհութիւնը ունեցաւ ընտրութիւններու Նախօրէին Նախագահական մակարդակով հանդիպումի ընթացք չտալու, այլ Դամասկոս-Անգարա յարաբերութիւններու կարգաւորման ամենէն Նախնական քայլի մակարդակին վրայ պահելու երկու երկիրներու պատուիրակութիւններու հանդիպումները:

Սուրիան յարաբերութիւններու կարգաւորման յստակ պայման դրած էր ու կը շարունակէ պահել այդ կարմիր գիծը՝ թըրքական ուժերուն սուրիական տարածքներէն դուրս գալու պայմանը: Հետեւաբար Թուրքիան քաջատեղեակ է որ քրտական գործօսին գծով իր մտահոգութիւնը Սուրիան պիտի չփարատէ, մինչեւ թրջական ուժերուն դուրս գալը:

Միւս կողմէ Թուրքիոյ մէջ 3 միլիոնի հասնող սուրիացի գաղթականներուն հարցը պիտի լուծուի երկու երկիրներուն փոխադարձ զիջումներով:

Եթէ նկատի ունենանք Սուրիոյ վերականգնող դերն ու ներկայութիւնը արաբական աշխարհին մէջ, ինչպէս նաեւ Ռուսիոյ դերակատարութիւնը երկու երկիրներու մերձեցման ճիգերուն մէջ, կարելի է ենթադրել որ Թուրքիան ինչպէս արաբական շարք մը երկիրներու, այնպէս ալ Սուրիոյ հետ յարաբերութիւններու բարելաման փորձերը պիտի շարունակէ, թեկուզ դանդաղ կշռոյթով, որպէսզի գեթ նոր լարուածութեան առիթ չտայ իր սահմանին ու փորձէ յաղթահարել տնտեսական իր ճգնաժամը:

«Գ.»

-Չորեքշաբթի, 7 Յունիսի առաւօտեան ժամը 8:00-ին, Սուրիոյ բոլոր Նահանգներուն մէջ ընթացք առին երկրորդական բաժնի աւարտական կարգի՝ պաքալորիայի, 2022-2023 ուսումնական տարեշրջանի պետական քննութիւնները, գրական, գիտական, ինչպէս նաեւ արհեստից պաքալորիայի բաժնիներով:



Քննութիւններ յանձնելու ներկայացան 256.924 աշակերտ-աշակերտուհիներ, բաժնուած Սուրիոյ բոլոր Նահանգներու 2332 կեդրոններուն մէջ: Գիտական եւ արհեստից բաժնիներու քննութիւնները կը տեւեն մինչեւ 26 Յունիս, իսկ գրականինը՝ 24 Յունիս 2023:

-Սուրիոյ Հանրապետութեան մասնակցութեամբ, Երեքշաբթի, 6 Յունիս 2023-ին, Ժընեւի մէջ ընթացք առաւ միջազգային աշխատանքի 111-րդ շրջանի տարեկան խորհրդաժողովը, կազմակերպութեամբ միջազգային աշխատանքի կազմակերպութեան: Խորհրդաժողովը պիտի շարունակուի մինչեւ 16 Յունիս:



-Երեքշաբթի, 6 Յունիսին 2023-ին, սուրիական Երկրաշարժներու Գրանցման Ազգային կեդրոնը յայտարարեց, որ 8 յետցնցումային երկրաշարժ արձանագրուեցաւ 1,7 - 4,1 ռիխթըր ուժգնութեամբ: Իսկ յաջորդ առաւօտեան ժամը 7:58-ին, թեթեւ յետցնցումային երկրաշարժ մը արձանագրուեցաւ Ռաքքայի հիւսիսարեւելեան շրջանին մէջ, 2,8 ռիխթըր ուժգնութեամբ եւ 6,2 ք.մ. խորունկութեամբ:



#المركز الوطني للزلازل

-Երեքշաբթի, 6 Յունիս 2023-ին, Իրաքի Նախագահական պալատէն ներս, Իրաքի Նախագահ Ալլաւիի ճամբով Ռաշիտ ընդունեց Սուրիոյ արտաքին գործոց Նախարար ղոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատը: Նախարար Մըքտատ յայտնեց, որ Սուրիա կը ձգտի երկու երկիրներու եղբայրական յարաբերութիւնը զարգացնել եւ տնտեսական ու առեւտրական փոխանակումները ընդլայնել: Իր կարգին Նախագահ Ռաշիտ շեշտեց Սուրիոյ եւ Իրաքի կայուն յարաբերութիւնները զարգացնելու կարեւորութիւնը տարբեր ոլորտներու մէջ:



-Շաբաթ, 3 Յունիս 2023-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ազգ. Առաջնորդարանէն ներս ընդունեց այցելութիւնը Հայկաի քաղաքապետարանի Յարաբերական Մարմինի անդամներուն: Հանդիպումին ներկայ գըտնուեցան նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ մէթր Սունայու Սունայուլեան, ատենադպիր երկրչփ. Մարալ Գալայճեան-Սեմեդեան եւ երկրաշարժի արտակարգ իրավիճակի մարմինի ներկայացուցիչ երկրչփ. Սիլվա Բախանեան-Նազարեան:



Մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին անդրադարձ կատարուեցաւ Հայկաի մէջ յետ տագնապին տարուող ծառայողական աշխատանքներուն, յատկապէս փողոցի լուսաւորման եւ ազգային կեդրոններուն շուրջ մաքրութիւն եւ լուսաւորում ապահովելու մասին:

ԱԿՆԱՐԿ

ՓԱՇԻՆԵԱՆԵՆ «ԱՆՆԱԿԵՆԹԱՑ» ՄԸ ԵՄ...



Ս. Մահսերեան

Նիկոլ Փաշինեան շատ կը սիրէ ԱՆՆԱԿԵՆԹԱՑ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ բառը...

Եւ ահա, թաւիշով քողարկուած՝ նոր օրերուն նոր-համայնավարը (հե-

Արդէն ահագին բան ըսուեցաւ եւ պիտի ըսուի, թէ այս արարողութեան փութացեր էր...



Փաշինեան Ալիեւի ետին

Փաշինեանի այցելութիւնը ներկայացուցեցաւ իբրեւ փրոթոքոլային քայլ...

Նման հարցադրումներ կատարելու համար, մարդս պետք է տարրական դատողութիւն ունենայ...

Այս բոլորէն անդին, մէկ բան աղաղակող է. Փաշինեան չի կրնար յայտարարել...

Կը մնայ հարց տալ, թէ Փաշինեանի մը ի՞նչ տեսակի հնարամտութեան կը բխէր...

Կարելի է թուել ձեւական եւ խորքային նպատակներ: Ձեւականներուն շարքին...

ներու հետ խմբային լուսանկար ունենալու առիթ մը, հոգ չէ թէ գինք տեղադրած էին...

Խորքին մէջ, մարդս ստիպուած, եւ արդարօրէն, կը տարուի այն մեկնաբանութիւններով...

Եւ ահա հոս է որ ի յայտ կու գայ, թէ ինչպիսի՞ «հեռատես քաղաքականութիւն» կը վարէ Փաշինեան...

Պատկերասփիւռի կայանէ մը սփռուեցան պարզ քաղաքացիներու մէկ քանի կարծիք:

Վերջին կարծիքը յայտնուող արդեօք կը յիշէ՞ր, որ Փաշինեան քանի մը ամիս առաջ ինչպիսի՞ վեհանձնութեամբ...

...60-ականներու կետերուն, Արամ Յայկազ գրած է սիւնակ մը, ուր կ'արձագանգէ թուրքիա այցելած...

Յայկազ կը շարունակէ. «Կար ժամանակ, որ խօսելով կամ ակնարկելով թուրքին կ'ըսէիք շուն»:

Փաշինեանի եւ իր ուսապարկերուն տրամաբանութեամբ, «հին» Զոհարներն ու Յայկազները...

Իսկ մեր ժողովուրդը, հայրենիք եւ պետութիւն սիրող զանազան ծղարկներով մինչեւ ո՛ր կու պիտի տայ...

Թուրքիոյ նուրջ

ՓԱՇԻՆԵԱՆ ԹՈՒՐԷՈՅ ՄԵՋ ԿԱՐՋ ԶՐՈՅՅՆԵՐ ՈՒՆԵՅԱԾ Է ԷՐՏՈՂԱՆԻ ՈՒ ԱԼԻԵԻ ՇԵՏ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Թուրքիոյ վերընտրուած նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան, 3 Յունիսին Անգարայի մէջ կարճ գրոյց մը ունեցած են:



Վարչապետը Անգարա մեկնած էր Թուրքիոյ հրաւերին ընդառաջելով ներկայ գտնուելու Ռեճեպ Թայիպ Էրտողանի՝ նախագահի պաշտօնի ստանձնման արարողութեան:

«Երկիր» կը հաղորդէ, որ Թուրքիա իր այցելութեան շրջագիծէն ներս, վարչապետը կարճ գրոյց մը ունեցած է նաեւ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

ԷՐՏՈՂԱՆԻ ՓԵՍԱՆ՝ ԵԼԵԽՈՒՏԵՐ ԵՆԻՍԱՐԱՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԱԾ Է ԹՈՒՐԷՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

4 Յունիսին Թուրքիոյ խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ վերընտրուած նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի երդմանակալութեան արարողութիւնը: Նոյն օրը Էրտողան մամուլի ասուլիսի ընթացքին յայտարարեց Նոր կառավարութեան կազմը:

Պաշտպանութեան նախարար Անալոկու Նուրուհի Աքարը, որ նախապէս կը վարէր Թուրքիոյ զինեալ ուժերու սպայակոյտի պետի պաշտօնը:



Էրտողան ելեւմուտքի նախարար Ալիյաւրաքը, որ նախապէս կը գլխաւորէր Ուժանիւթի եւ Բնական Պաշարներու Նախարարութիւնը:

Առեւտուրի նախարար Անալոկու Նուրուհի Աքարը, որ նախապէս կը ծարտարագիտութեան եւ Չարգացման Նախարարութեան ղեկավարութիւնը: Ուժանիւթի փոխ-նախարար Ֆաթիհ Տօնմէզ Անալոկու Նուրուհի Աքարը, իսկ Մայրուղիներու տնօրէնութեան նախկին ղեկավար Ճահիթ Թուրան Անալոկու Նուրուհի Աքարը:

Ըստ թրքական լրատուամիջոցներու, Թուրքիոյ արտաքին գործոց նոր նշանակ նախարար Հաքան Ֆիտան, ամենայն հաւանականութեամբ, պիտի ձգտի աշխուժացնել Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիքայի տարածաշրջանի պետութիւններու հետ կապերու ամրապնդման ոլորտի Անգարայի քաղաքականութիւնը՝ շարունակելով թրքական հետախուզութեան ղեկավարի նախկին պաշտօնի իր ուղղութիւնը:

Ընդհանուր առմամբ, նոր կառավարութեան կազմին մէջ ընդգրկուած է 16 նախարար, ինչ որ 10-ով նուազ է, քան նախորդ կազմին մէջ:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԵՌՆԻՆ...

Մօր շիջումով մեր խորքերուն մէջ կը յամենայ տարակոյսի յաճախանքը՝ հրեշտակներու յաւերժութեան տիեզերական խորհուրդին ... Եւ մօր մահուամբ կը հասկնանք, որ հրեշտակներն ալ կը մեռնին... հրեշտակներն ալ կը դառնան յաւերժի ճամբորդ... հրեշտակներն ալ կը մնան լուսաւոր յուշ եւ խնկաբոյր միմօր...



Քառասուն օրեր անառջ, գարնան անառջ մը յեղակարծօրէն կ'ընդհատուէր հայ մօր մը լուսառատ, սիրառատ կշռոյթով հընչող համանուագը. մօր մը, որ կեանք մը ամբողջ իր ներաշխարհը գունաւորած էր իր շրջապատը վարակած էր իր սիրած «Մայիս»-ներու վարդաբոյր խորհուրդով...

Ոչ եւս էր Ֆլորա Ամպարճեան-Արսլանեան՝ ազնուական հայուհին, գորովոր, տիպար մայրը, հայ կնոջ ուսանելի կերպարը: Ման օրինակելի, գուցէ եւ այլեւս անփոխարինելի ու անկրկնելի հայ մայրերու շիջումով՝ կը խախտի հայ նահապետական օճախի աւանդական հաւասարակշռութիւնը... կը Նօսրանայ մեր կտոր մը երկինքի կապոյտը... կը խանգարուի մեր ներքին երաժշտութեան կշռոյթը... կ'երեւայ մեր ինքնութեան կոմասներու հիմնակառոյցը... կը տխրին մեր հին ու նոր աստուածները եւ կու լան հրեշտակ դարձած մեր մայրերը բոլոր...

Արցունքոտ յուղարկաւորութիւն... Յուզախոնով ապրումներ ի տես ուսամբարձ դագաղը կրող Ամպարճեան գերդաստանի Հալեպ փութացած ցրիւ այրերուն...

Հոգեհանգիստ... Բուռ-բուռ ծխացող խունկ... Վառող ու չհանգող մոմեր... Ծնկաչոք աղօթք... Լեռնակոյտ վարդ ու ծաղիկ... Եւ հիմա Որքան լոյս կայ հողին տակ անտակ... Որքան կապոյտ է երկինքը հիմա, երբ հայ մօր լուսաբաշխ հոգին կը վառէ պատրոյզը երկնքի լազուրին... Նկէջ խաղաղութեամբ, Ամպարճեան գերդաստանի յոյժ յարգելի ու սիրուած տիրուհի... Զորս գաւազներուդ՝ Նորային, Տիրանին, Ճորճին ու Թամարին, ինչպէս նաեւ եօթ թռչններուդ ու երեք ծոռերուդ ջամբած համամարդկային եւ հայրենասիրութեան ու հայրենասիրութեան արժեքները, անոնց հաւաքական նկարագրի դրսեւորումներով՝ արդէն կը վկայեն մարդու եւ հայու բարձրակետային անառքութեան պատմելի վրայ գտնուած ըլլալը... Լո՛յս երկնային ճանապարհիդ... Այո՛, հրեշտակներն ալ կը մեռնին...

Սգակիր


«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Խմբագիր՝ Զարմիկ Զիլվերօշեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհալ Պարսումեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թովայեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերօշեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներն եւ աշխատակիցներն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթի հաշուապահին հետ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Ամպարճեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՖԼՈՐԱ ԱՄՊԱՐՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ԱՐՍԼԱՆԵԱՆ)
մահուան սուգին:
Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Յունիս 2023-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Հալեպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Կրթասիրաց վարժարանի շրջափակի սրահը:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Իսկէնեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԶՍՊԷԼ ԻՍԿԵՆԵԱՆԻ (Ծնեալ՝ ԱՐՍԼԱՆԵԱՆ)
մահուան սուգին:
Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 18 Յունիս 2023-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Հալեպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Կրթասիրաց Մշակութային Միութեան «Փիւնիկ» սրահը:



ՄԻՄՈՆ ՉԱԲԱՐԵԱՆ՝
ՄԱՐԴԻՆ ՈՒ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ



Սոնա Եազուպեան-Ղազարեան

«Եթէ Զրիստափորը Դաշնակցութեան միտքն է,

Ռոստոմը՝ կամքը եւ ուժը,

Չաւարեանը Դաշնակցութեան խիղճն է»:

Այսպէս բնութագրուած եւ ընդունուած է ԶՅԴ հիմնադիր երրորդութիւնը սկիզբէն ի վեր: Զիմնադիրներէն մէկը ըլլալէն անդին, մենք ընդհանրապէս շատ քիչ բան գիտենք Չաւարեանի 25-ամեայ բեղուն եւ բազմակողմանի գործունէութեան եւ աշխատանքին մասին:

Այս կէտը նկատի առած, Համագայինը «Սիմոն Չաւարեան» խորագիրով ընդարձակ երեք հատորներով 2072 էջանի աշխատանքը

տպած է 1984-ին, Պէյրութի մէջ, աւելի մօտէն ծանօթանալու իր գործերուն եւ յատկութիւններուն:

Իսկ 1980-ին արդէն տպած է Ռոստոմի նուիրուած գործը մէկ հատորով:

Յուշիկը՝ աղջիկս, մտադրած էր Չաւարեանի մասին ուսումնասիրութիւն մը ընել, բայց դժբախտաբար վաղահաս մահը խլեց իր թանկագին կեանքը, մեծ վիշտ մը եւ պարապութիւն մը ձգելով մեր եւ իր շրջապատին մէջ:

Կարծեք օրուան 24 ժամը բաւարար չէր իր հետաքրքրութիւններուն եւ գործերուն գոհացում տալու համար, հետեւաբար շատ մը ծրագիրներ, որոնք պատրաստած էր եւ արդէն հասուն-

ցուցած մտքին մէջ, առանց լոյս տեսնելու առ-յաւետ կորսուեցան իր հետ: Ինչ կը վերաբերի այս ծրագիրին, Յուշիկը կ' ուզէր անպայման այդ հատորները ուսումնասիրել եւ ամփոփել, որպէսզի աւելի մատչելի դառնան նոր սերունդներուն յատկապէս եւ հանրութեան ընդհանրապէս:

Այս հատորներուն ձեռքի տակ ունենալը հնարաւորութիւնը տուաւ ինծի գործադրելու իր անաւարտ աշխատանքը:

Յաւանութիւնը չունի մեծ աշխատանք մը տարած ըլլալու, բայց գոհունակութիւնը ունեցայ իրականացնելու իր փափաքներէն մէկը, դժբախտաբար յետ իր մահուն:

Ծնած է 1866-ին, Հայաստանի Լոռիի լեռնային, անտառուտ գաւառի Իգահատ գիւղը: Տարօրինակ գիւղ մը, որուն մէջ ռամիկ կամ շինական չկայ, բոլորն ալ ազնուական են:

Մանկութիւնը այդ գեղեցիկ միջավայրին մէջ անցընելէ յետոյ, կ' ուղարկուի Թիֆլիս՝ ռուսական միջնակարգ դպրոց, որ փայլուն կերպով աւարտելէ վերջ կը մեկնի Մոսկուայի Ինչակաւոր Բեղովգայի Պետրոսեան գիւղատընտեսական ճեմարանը, որ այդ օրերուն ռուս յառաջադէմ ու յեղափոխական երիտասարդութեան եւ ուսանողութեան ուստան էր:

Ըմբոստ, տաքարիւն Սիմոն Չաւարեանը կը նետուի համառուսական շարժման ալիքներուն մէջ, կը դառնայ քարոզիչ մը, դեռ գրեթէ պատանի ու կը սիրուի իր ռուս ընկերներէն: Իր հետ էր Ռոստոմը, Նմանապէս ու-ժեղ, ըմբոստ նկարագիր մը, աւելի ծանրաշարժ, նուազ վառվռուն ու կրակոտ, քան Սիմոնը: Երկուքը կը միանան գաղափարական ամենաչերմ եղբայրութեան կապերով, որոնք անխախտ կը շարունակուին մինչեւ վերջ: Շուտով երկուքը պիտի միանային նաեւ միւս հոյակապ հայ երիտասարդին եւ պիտի ստեղծուէր հայկական շարժման համբաւուր երրորդութիւնը:

Տոքթօր Չաւարեան, որ հանդիպած է Սիմոնին ուսանողութեան այն երջանիկ օրերուն, այսպէս կը գրէր «Դրօշակ»-ին մէջ, «Հայոց լեռներուն այդ հարազատ գաւառը, ինքզինքը կը զգար որպէս համաշխարհաքաղաքացի (գոգ մորթի) եւ կը մերժէր ազգութիւնը»:

Այդ օրերուն այդպէս էր երիտասարդական մթնոլորտը, բայց այդ եռուն, աղմկոտ, գուրթ երիտասարդութեան մէջէն գատուեցաւ փոքրիկ խումբ մը, լուռ եւ մտածկոտ: Այդ խումբի մաս կազմողներուն աչքերը յառած էին դէպի հեռու հայրենիք: Անոնց սիրտը կը ցաւէր ու կը բարբախէր հարազատ ժողովուրդին համար: Անոնց ուղեղը միշտ միջոցներ կը հնարէր ազատելու այդ ժողովուրդը թրջական բարբարոսութենէն:

Անոնք մօտեցան գոգ մորթիի երիտասարդին, արթնցուցին անոր մէջ հայկական ոգին եւ վառեցին անոր մէջ Աստուածային կայծ:

«Այդ կայծը - կը շարունակէ Տոքթօր Յակոբ Չաւարեանը - բոցավառուելով հրդեհեց անոր ամբողջ էութիւնը, ստիպեց ձգել ամէն բան, ընտանիք, երջանկութիւն, ասպարէզ, արծարծեց անոր մէջ սեր-սեր դէպի մարդը, սեր դէպի հարազատ ցեղը: Անսահման, ջիւղ, գրեթէ մայրական սեր մը դէպի հայ ժողովուրդը»:

1889-ին Չաւարեան կ' աւարտէ Պետրոսեան ճեմարանը եւ կը վերադառնայ հայրենիք: 1890-ին Թիֆլիսի տան մը մէջ հաւաքուած էին հինգ երիտասարդներ, բոլորն ալ խանդավառուած մէկ գաղափարով՝ տեսնել հարազատ ժողովուրդը ազատագրուած թրջական բարբարոս լուծել:

Հակառակ անոր որ մեծ եւ ծանրակշիռ գործը մէկ անգամէն չի ծնիր, սակայն այդ սուրբ երրորդութիւնը շուտով ծնունդ առաւ: Զիմնադիրներուն շարքին էր Սիմոն Չաւարեան:

1890-ի վերջերուն, Չաւարեան Յովսէփ Արղուեանի հետ (Իշխան) մեկնեցաւ Տրապիզոն ուսուցչական պաշտօնով, նպատակ ունենալով մօտէն դիտել Թուրքիան, ուսումնասիրել տիրող կարգերը եւ հայ ժողովուրդին վիճակը: Ան ձեռքակալուեցաւ ու յանձնուեցաւ կովկասեան իշխանութեան, որ գինը քննորոգէր հարաւային Ռուսաստան, իր գաղափարական մեծ գիտական Զրիստափոր Միքայելեանի հետ: Անոնք իրարու կապուած մնացին մինչեւ մահ, թէւ տարբեր ժամանակներով:

Առաջին օրէն, Չաւարեան եղաւ ապակեդրոնացման գաղափարի պաշտպանը, համոզուած տեղական ինքնավարութեան, ոչ միայն յեղափոխական շարժման, այլ քաղաքական, հանրային կեանքի մէջ:

1892-ին, երբ տեղի ունեցաւ Դաշնակցութեան անդրանիկ ընդհանուր ժողովը, ուր վերջնականապէս ընդունուեցաւ ապակեդրոնացման դրութիւնը Յովսէփ Դաւիթեանի պաշտպանութեամբ եւ աշակցութեամբ, Սիմոն Չաւարեան դարձաւ կուսակցութեան տիրական դեմքերէն մէկը: Անոր կեանքը սերտօրէն հիւսուեցաւ Դաշնակցութեան կեանքին հետ: Զետեւաբար անոր

կենսագրութիւնը կազմել, կը նշանակէր Դաշնակցութեան պատմութիւնը գրել մինչեւ 1913՝ իր չարագոյժ մահուան թուականը:

Երբ հարցնէին իր կարծիքը այս կամ այն նոր ընկերոջ մասին, դրական ըլլալու պարագային կը պատասխանէր ըսելով «նուիրուած է», որ կը նշանակէր անձնուէր, հաւատարիմ, մաքուր, հայրենասէր, ազնիւ եւ անկաշառ նկարագիր ունեցող անձ է, որ չի կրնար ըլլալ ո՛չ փառամոլ, ո՛չ աթոռամոլ, ո՛չ գոռոզ, ո՛չ ցուցամոլ, ոչ ալ սիրապաշտ, այլ՝ տոկուն, չարքաշ, աշխատասէր, դժուար ճիգերու, մեծ գոհաբերութիւններու պատրաստ անձնաւորութիւն, որ կը հրաժարի կեանքի բոլոր հրապոյրներէն եւ լիովին իր անձը կը նուիրէ իր բազմատանջ ժողովուրդի դատին:

Իր քարոզած այս ընտիր յատկութիւնները պարզապէս անգործադրելի խօսքեր չէին ուղղուած ուրիշներու, այլ իր հաւատամքն ու համոզումը կը կազմէին, որ կը գործադրէր իր ամօրեայ կեանքի ընթացքին ամենայն բժախնդրութեամբ՝ օրինակ դառնալով ազգի բոլոր սերունդներու նուիրեալներուն:

Մասնագիտութեամբ գիւղատնտես էր: Զանի մը կարելոր ուսումնասիրութիւններ հրատարակած է Կովկասի մէջ, տպագրուած ռուսերէնով եւ գնահատուած ամբողջ Կովկասի մէջ:

Կը սիրէր գիւղը, բնութիւնը եւ յատուկ հոգատարութիւն կը ցուցաբերէր հայ չարքաշ գիւղացիին:

Պտոյտներ կ'ընէր գաւառներու մէջ, գիւղատնտեսի եւ միանգամայն յեղափոխական քարոզիչի պտոյտներ էին: Այս պտոյտները իրեն դիւրութիւն կու տային մօտէն տեսնելու, ուսումնասիրելու հայ աշխատաւոր ժողովուրդին տրամադրութիւնները եւ մտցնելու Դաշնակցութեան գաղափարը գիւղական առաջնորդող շարքերու մէջ: Ինքնատիպ էր յեղափոխական քարոզչութեան մէջ, ոչ մի կեղծիք, ոչինչ շինծու, ոչինչ դերասանական: Կը խօսէր Հայ Դատին եւ հայկական շարժումին մասին, հաւատացած էր, որ կռուիլը վերջ ի վերջոյ աւելի արդիւնաւետ է, աւելի օգտակար, նուազ քան դող ու կորստաբեր, քան չկռուիլը, եւ հարուածող չարիքներուն դիմադրելով, հայ ժողովուրդը աւելի քիչ գոհեր կու տայ, քան չդիմադրելով ու համակերպելով:

(Շար. 1)

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

Խոյ
Սիրային արկածախնդրություն մը պիտի ունենայք այս շաբաթ: Հաճելի պահեր պիտի ապրիք ձեր սիրելիներուն հետ:
- 

Ցուլ
Բարեկամ մը նիւթական ներդրում մը պիտի կատարէ եւ աջակցի ձեզի: Շաբաթը դրական պիտի ըլլայ:
- 

Երկուորեակ
Ձեր բոլոր գործերը գովելի են եւ յաջող: Անհրաժեշտ է, որ առողջութեան ալ հոգ տանիք:
- 

Խեցգետին
Չափազանց անձնասեր եւ նիւթապաշտ եղած էք: Բարեկամներ ձեր աջակցութեան կարիքը ունին: Մի՛ տատամսիք:
- 

Առիւծ
Հաճելի անակնկալներով լի շաբաթ մը պիտի ունենայք, որ պիտի կազդուրէ ձեզ: Համբերեցէ՛ք:
- 

Կոյս
Մտերիմ ընկերներով շրջապատուած էք: Մարդոց գովասանքին պիտի արժանանայք եւ հպարտանայք:
- 

Կշիռ
Ժրաջան աշխատանքի պատուող պիտի քաղէք վերջապէս: Կարճ պտոյտ մը պիտի կազմակերպէք եւ գուարճանայք:
- 

Կարիճ
Վրէժխնդիր մի՛ ըլլաք: Ընտանիքի անդամներուն հանդէպ աւելի համբերատար եղէ՛ք: Մի՛ բարկանայք:
- 


Աղեղնաւոր
Ձեր նպատակները իրագործելու համար անդադար կ'աշխատիք: Մի՛ վհատիք: Ի վերջոյ պիտի իրականացնէք զանոնք:
- 

Այծեղջիւր
Վերջապէս ձեր սերը պիտի արտայայտէք ու հանգստանայք: Փոքր նուէր մը պիտի ստանայք եւ ուրախանայք:
- 

Ջրիոս
Մօտիկ բարեկամ մը հաճելի լուր մը պիտի ստանայք: Մեծ յաջողութիւններ կը սպասեն ձեզի:
- 

Ձուկ
Անկեղծութիւնն ու հաւատարմութիւնը ձեր յատկութիւններն են: Աստուածային պարգեւներուն պիտի արժանանայք:

Քսեանկար



Անահիտ Պողոսեան-Տարաքճեան

ԿԵՆՑԱԴՆԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Ինչպէ՞ս գործածել դասակը, դգալը եւ պատառաքաղը, ինչպէ՞ս կապել կօշիկին կապերը, ե՞րբ դիմել մեծերուն:

Նել սորվի:
Մեր գաւակներուն սորվեցնենք, թէ ե՞րբ եւ ինչո՞ւ շնորհակալութիւն պէտք է յայտնեն:



Մանկավարժներ կը յայտնեն, որ երջանիկ, ուրախ եւ առողջ ըլլալու համար պէտք է երախտագետ ըլլալ, որովհետեւ երախտագետ անձը աւելի հանգիստ կը քնանայ, աւելի դիմացկուն ու գոհ կ'ըլլայ իր կեանքէն:

Գ) Փոքրիկը ներողութիւն պէտք է խնդրէ եւ ներէ:

Պէտք է փոքրիկը դաստիարակել այնպէս մը, որ միշտ ներողութիւն խնդրէ իր գործած սխալ արարքներուն համար, ինչպէս նաեւ դիմացիկը ներելու սովորութիւն ձեռք բերէ:

Երբեք մի՛ ստիպէք փոքրիկը ներողութիւն խնդրելու, այլ՝ ժամանակ տուէ՛ք, որպէսզի մտածէ, անդրադառնայ իր սխալին եւ ինքնուրոյն ներողութիւն խնդրէ:

Եթէ մեր գաւակներուն սորվեցնենք քաղաքավարական կանոնները, անոնք ոչ միայն կ'իւրացնեն զանոնք, այլեւ կը դառնան պատասխանատու պատանիներ: Ուստի հարկ է փոքր տարիքէն սորվեցնել անոնց կենցաղային կարգ մը գիտելիքներ, քաջ գիտնալով, որ փոքրիկին առաջին օրինակը ծնողն է:

դառնայ իր սխալին եւ ինքնուրոյն ներողութիւն խնդրէ:

Երբ ձեր գաւակը ներողամիտ ըլլայ, հետագային աւելի հանգիստ եւ խաղաղ կեանք մը կը վարէ:

Ա) Փոքրիկը պէտք է բարեւ տալ սորվի:

Ձեր գաւակներուն պէտք է սորվեցնել, որ մարդոց հանդիպելու պարագային պէտք է բարեւել՝ բարի լոյս, բարի իրիկուն, բարի գիշեր ըսել, ինչպէս նաեւ իրաժեշտ տալ՝ անոնց աչքերուն մէջ նայելով: Փոքրերը յաճախ կ'ամբնան անծանօթ մարդոց բարեւելու:



Փոքրիկին պէտք է սորվեցնել, թէ երբ հիւր գայ կամ անծանօթ անձ մը իրեն մօտենայ, անպայման պէտք է բարեւէ անոր, անկախ թէ ինչով զբաղած է (համակարգիչով, դաս սորվելով, թէ այլ բանով):

գային աւելի հանգիստ եւ խաղաղ կեանք մը կը վարէ:

Դ) Փոքրիկը պէտք է սպասել սորվի:

Ձեր գաւակը դաստիարակեցէ՛ք այնպէս մը, որ սպասել սորվի:

Պէտք է սպասել դիմացիկին խօսակցութեան աւարտին եւ չմիջամտել զայն:

Եթէ ձեր գաւակը միջամտէ ձեր խօսակցութեան, մի՛ պատասխանէք նոյնիսկ կարճ նախադասութեամբ, այլ անոր աչքերուն մէջ նայելով հասկցուցէ՛ք իրեն, որ այս պահուն զբաղած էք եւ երբ աւարտէք մտիկ կ'ընէք իրեն:



Բարեւելը մեծ նշանակութիւն ունի ընկերային յարաբերութեան մէջ, քանի որ մարդիկ ընկերային էակներ են:

Երբ մենք դիմացիկին կը բարեւենք մեր գաւակին դիմաց, մենք կը սորվեցնենք անոր նկատի առնել դիմացիկը եւ ընդունիլ զայն:

Ինքնավստահութիւն ունենալու համար անհրաժեշտ է պատշաճ ձեւով բարեւել սորվի:

Այլ պարագաներու, եթէ ձեր գաւակը տուրմ նուէր ստացած է, օրինակ, միասին պահեցէ՛ք զայն, որպէսզի ճաշէն ետք ուտէ:

Եթէ խաղալիք մը նուէր ստացած է, նախ յանձնարարեցէ՛ք տնային պարտականութիւնները աւարտել, կամ սենեակը կարգի բերել, յետոյ խաղալիքին տուփը բանալ:

Երբ փոքրիկը սպասել եւ իր ուրախութիւնը քանի մը վայրկեան յետաձգել սորվի, հետագային յաջող եւ աշխատասեր անձնաւորութիւն մը կը դառնայ:

Բ) Փոքրիկը պէտք է շնորհակալութիւն յայտ-

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ ֆուտբոլի Ա. դասակարգի ախոյեանութեան աւարտին, Տեր Զօրի ֆթուէ ակումբը 32 տարի ետք յաջողեցաւ իր պատմութեան մէջ երրորդ անգամ ըլլալով տիրանալ Սուրիոյ ախոյեանութեան: Ախոյեանին անունը յստակացաւ վերջին փուլին: Հալէպի Ահլին իրական մրցակցութիւն մը ունեցաւ եւ ընդհանուր աղիւսակին վրայ ետ մնաց ֆթուէի կազմէն՝ միայն մէկ կէտով: Յիշենք, որ ֆթուէն 1989-1990 եւ 1990-1991 տարեշրջաններուն տիրացած է Սուրիոյ ախոյեանութեան:



- Սուրիոյ պասքէթի ախոյեանութեան առաջին փուլը աւարտելէն ետք, Հալէպի Ահլին, Համայի Նաուաիրը, Դամասկոսի Ուահտէ եւ Ճէշ խումբերը հասան աւարտական քառեակ, իսկ Հըթթին եւ Ուասպէ խումբերը փոխանցուեցան Բ. դասակարգ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՔԱՐԻՄ ՊԵՆՉԵՍԱ ԴԵՌԱՅԱՎ ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏԵԼ

Երկար տարիներ ետք, Ֆրանսայի հաւաքականի եւ Ռեալ Մատրիտի յարձակողական խաղացող Քարիմ Պենչեմա պաշտօնապէս յայտարարեց, թէ այս տարեշրջանը սպանական խումբին հետ վերջինս է իրեն համար, եւ գոյգ կողմերը պիտի չերկարաձգեն իրենց միջեւ եղած պայմանագիրը: Պենչեմա մաս կազմեց Ռեալ Մատրիտին 2009-ին, երբ 21 տարեկան էր: 14 տարի շարունակ ան արքայական խումբին հետ արժանացաւ 25 տիտղոսներու: Պենչեմա Ռեալին հետ տիրացաւ Չեմփիընզ Լիկի 5 մրցանակի, համաշխարհային ակումբներու հինգ առաջնութեան, Եւրոպայի չորս Սուփըր գաւաթի, Սպանիոյ չորս ախոյեանութեան, Սպանիոյ երեք բաժակի եւ չորս Սուփըր գաւաթի: Իր մաս կազմած 647 մրցումներուն ան նշանակած է 353 կոլ եւ կը գրաւէ ակումբի պատմութեան հինգերորդ դիրքը, որպէս լաւագոյն ռմբարկու:

Աւելցնենք, որ սպանական մամուլը գրած էր, որ Պենչեմա պիտի տեղափոխուի Սեուտական Արաբիոյ «Ալ-Իթթիհատ» ակումբ եւ պիտի ստորագրէ երկու տարուան պայմանագիր, որով պիտի ստանայ տարեկան 100 միլիոն եւրօ:

ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻՔՆ ԴԱՐՁԱՎ ԱՆԳԼԻՈՅ ԳԱՄԹԱԿԻՐ

Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ Անգլիոյ գաւաթի աւարտական մրցումը, ուր 7-րդ անգամ ըլլալով Մանչեսթըր Սիթին յաջողեցաւ նուաճել ախոյեանութիւնը, 2-1 արդիւնքով՝ պարտութեան մատնելէ ետք իր մրցակից Մանչեսթըր Ինթալթըրը:



52 տարեկան մասնագետ մարզիչ Կուարտիլայի գլխաւորութեամբ Սիթին կրցաւ ձեռք ձգել իր հինգերորդ տիտղոսը: 10 Յունիսին ան թեկնածու է նաեւ տիրանալու Չեմփիընզ Լիկի բաժակին, ուր իր մրցակիցը պիտի դառնայ Իտալիոյ Ինթըր Միլանը:

ԽԱԶՐԱՌ (ՄԽ 441)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1				■				■				
2					■							
3				■		■		■		■		
4										■		
5				■			■		■			
6		■						■			■	
7					■		■				■	■
8					■							■
9			■			■					■	
10										■		
11	■		■				■		■			
12				■						■		

Հորիզոնական

1. Բանակ: Գամ: Վահան Փափագեանի ծածկանունը:
2. Յորենի հետ աճող բոյս: Պետական բարձրագոյն պաշտօնատար:
3. Ուրախ: Ձայնակիչ մը:
4. Հրաշալիք: Կրկնուած բաղաձայններ:
5. Կտրուած ու մաքրուած ոչխարի բուրդ: Յոգնակերտ մասնիկ: Փակակը, կղպակը:
6. Կարծր փայտով ծառ: Աղբիւր:
7. Կեղեւ, պատեան: 42:
8. Առանց աղի: Ունկնդրութեան սրահ:
9. 5500: Հակառակ՝ ժամանում: Ընկոյզի կանաչ կեղեւ:
10. Հողէ արգելք՝ պատ: Աջք:
11. Տառի մը անունը: Բայ:
12. Հասկցիր: Թրքահայ մամուլ: Սարսափ:

Ուղղահայեաց

1. Արամ Հայկազի պատմուածքներու ժողովածուներէն (երկու բառ):
 2. Հայկական գետ: Սեղմում:
 3. Շրջել:
 4. Տկար, անգոր:
 5. Խոշոր ու աղուոր աչքեր ունեցող: Թէ որ:
 6. Էական բայ: Յորենը յարդէն բաժնել՝ հովին տալով:
 7. Միջին դարուն օգտագործուած հիւպատոսական տիտղոս: Հովանոցածէ բոյս:
 8. Առարկայ: Կռիւ, խռովութիւն:
 9. Բնակութեան տեղ: Հակառակ՝ թունդ, վառ:
 10. Յարաբերական դերանուն: Հակառակ՝ անձնական դերանուն:
- Ցաւի ճիշդ:
11. Փոքր մաս: Արական անուն:
 12. Երաժշտական գործիք: Ս. Պատարագի բաժակ:

ԽԱԶՐԱՌ (ՄԽ 440)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	մ	ա	ն	ր	ա	գ	ն	ի	ն	ա	հ	
2	ի	ր	ա	գ	է	տ	ի	ա	հ	ա		
3	ա			ա	ն	է	լ	է	ր	ա	մ	
4	ն	կ	ր	տ	ի	լ	ծ				օ	
5	ն	ւ	ր		ա	ղ	ա	ր	պ	ա	ս	
6	ւ	ն		ա	կ	ն	ա	ն	ն		ա	
7	ա	մ	չ	ն	ա	լ		ց	ն	ն	հ	
8	գ	ր	է		գ		ա	կ	ա	ւ	է	
9	ա			ի	ր	ա				ա	ա	
10	ր	փ	ա	ր	թ	ա	մ		ն	ն		
11	ա	լ	լ			օ	ր	օ	ր			
12	լ	ա	գ	ն	ւ	ա	ր	թ	ա	թ	ա	

ԼՈՒՐԵՐ

